



Մ Ա Հ Ա Ր Ձ Ա Ն

Ա Ր Ա Մ Ա Յ Ն Ե Ր Ս Ի Ս Ե Ա Ն

Ո Ր Ի Ծ Ա Ղ Ի Կ Հ Ա Ս Ա Կ Ի Ն Ն Ջ Ե Ա Ց Ի Տ Է Ր

Ներսիսեան Մեծապատիւ Գրիգոր Էփէնտի Արամ անուն փոքր որդին ՚ի Փարիզ, ուր ուսման կը պարապէր, հիւանդութեան մի ենթարկուելով չորս տարի յառաջ Պօլիս իւր ծնողաց քով կը վերադառնայ, ուրկէ եւս բժշկաց խորհրդով վերջին օրերո յԵփեսոսոս կ'ուղարկուի ընկերակցութեամբ մօր եղբօրն Մեծ. Յարութիւն Աղայի եւ մօրաքեռն Համեստափայլ Հռիփսիմէ տիկնոջ, սակայն ոչ այնքան ծախսերն ոչ իւր մօրեղբօր եւ մօրաքեռն տքնաջան հոգատարութիւնը օգուտ մի չընելով վերջապէս ամսոյս 7 ին իւր 20 ամեայ ծաղիկ հասակին մէջ մահկանացուն կը կնքէ ՚ի մեծ ցաւ եւ տրամութիւն որդեսէր ծնողաց: Բարեպաշտ ծնողքը, որք կը փափագին եղեր յետ առողջութեան իրենց որդւոյն, գալ յուստ եւ երկրպագութիւն, եւ այցելել նոյնպէս այն նուիրական դամբանին, ուր կը հանգչի բա-

րեյիշատակ Ներսէս աղայն Մեծ. Գրիգոր Էփէնտի հայրը, հեռագրիւ փափաք կը յոցոնեն, որ ննջեցելոյն նշխարքը տանին յԵրուսաղէմ եւ անդ ամիս փոն Ներսէս աղայի քով, ուստի ըստ փափագանայն նոցա ամսոյս 23 ին ուղղակի Ս. Աթոռս բերուելով՝ եւ գիշերն Եկեղեցին մնալով հեռեւեալ առաւօտուն յատկապէս Սուրբ Պատարագ մատուցաւ եւ ապա հանգիստոր յուղարկաւ որութեամբ ամիս փեցաւ ննջեցելոյն մարմինը Ս. Փրկչայ գերեզմանատան մէջ իւր Հաւուն, բարեյիշատակ Ներսէս աղային ծոյր: Ամեն Ս. Պատրիարքը սրտառուչ դամբանական մի խօսեցաւ, գովեց նորա հաւուն բարեպաշտութիւնը, որ իւր վերջին տարինեքուն մէջ ՚ի Ս. Երաւ տաղէմ գալով յուստ եւ յերկրպագութիւն, աստ մեռած եւ թաղուած է, գովեց նոյնպէս հօրը ընտիր ընտիր բարեմասնութիւնները, ողորմածասի-

րութիւնը , մարդասիրութիւնն և ազ-
գասիրութիւնը , որոց չնորհիւ չափե-
լին թէ՛ գաղտնի և թէ՛ յայտնի միւի-
թարուած եւ սիրտիւած են : Հան-
գուցելոյն բարեպաշտ գերդաստանի
այս Աստուածահաճոյ բարեմասնու-
թիւնները գովելէն զինի ցաւակցեցաւ
ճաղկահասակ ննջեցելոյն տարածամ
մահուան վերայ , յորմէ ապագային
մէջ անշուշտ բազում առաքինական
գործեր կ'ակնկալուէին իբրեւ հաւա-
տարիմ ժառանգ իւր բարեպաշտ գեր-
դաստանին , սակայն անողորմ մահուան
անգութ խորշակը խամբելով սոյն նո-
րածիկ վարդն իւր կոկոնին մէջ՝ վշտով
եւ դառնութեամբ լեցուց ոչ միայն
նորա որդեսէր ծնողաց սիրտը այլ եւ
ամեն անոնց , որք զինքը կը ճանաչէին :

Արդարեւ դառն է մահուան պը-

տուղը . դառն է ծնողաց համար իրենց
սիրասուն սրդիէն բաժանումը , որդ-
ւոց համար՝ իրենց ծնողքէն զրկուիլը .
եղբարց , բերց և ամեն բարեկամաց
համար հոգեհատոր եղբօր մը , ան-
գին բարեկամի մը կորուստը . բայց
պէտք է Աստուծոյ օրհնեալ կամքը
բաղդրացնէ այս դառնութիւնը , պէտք
է ամեն մահկանացու խոնարհի այս
պաշտելի կամաց առջեւ : Աշխարհ ի-
րական կենաց ստուերն է . հանդեր-
ձեալ աշխարհին հաւատը կ'ուսուցա-
նէ մեզ , որ մահը յաւիտենական կե-
նաց նախագուռն է : Այս հաւատով
եւ այս յուսով երկնից միսիթարու-
թիւնը կը մաղթեմք ննջեցելոյն աղէ-
խորով ծնողաց , վշտաբեկ սուղեկցոյ
և ամեն ազգականաց ու բարեկամաց
համար :

